

ՆԵՐԿԱՅ ՃԱՊՈՒՆԸ¹⁾

Մ Ի Շ Է Լ Ռ Ը Վ Ո Ն Ի

Դառնանք այժմ մարդկային մի այլ մեծ կարիքի—հաղորդակցութիւնը, որ քաղաքակիրթ կեանքում հանդէս է գալիս ճանապարհների և յարաբերութեան միջոցների աւելի կամ նուազ կատարելագործութիւններով: Այստեղ ևս մեր ունեցած գերազանցութիւնը բացայայտ էր. և ճապոնցիք իսկոյն ըմբռնեցին շոգու և ելեկտրականութեան առաւելութիւնները, լինի քաղաքական հայեցակէտից՝ ընդհանուր ապահովութեան ու վարչական կեդրոնացման համար, լինի տնտեսական հայեցակէտից՝ առևտրի ծաւալման համար, և լինի վերջապէս մասնաւոր ճոխութեան համար: Նրանք շուտով փոխեցին ներքին և արտաքին հաղորդակցութեանց ամբողջ հին եղանակը: Երկրում ունէին հասարակաց մեծ ճանապարհներ, որոնց վրայ շրջում էին ոտով կամ դեսպակով, եթէ թողին տեղափոխութեան այս վերջին ձևը, պատճառը լոկ այն էր, որ նրանք իւրացրին ձեռնասայլակը. թւում է թէ 1870-ին մի ճապոնցի էր հնարած այդ սայլակը, որ նրանք գերադասում են մեր ձիակառքերից: Բայց այն, որ հիացքով փոխ առնելու էին մեզնից, դրանք երկաթուղիներն էին:

Ես չեմ յիշեցնելու ճապոնական երկաթուղիների ծագումը, կամ այն սոսկալի դժուարութիւնները, որ այդ խնդրում ներկայացնում էր այս լեռնոտ երկիրը, և կամ բոլոր այն երկարաձիգ ջանքերը, որպէսզի ստացուէր արդէի ցանցը, այն է՝ տասը հազար քիլոմետրի հասնող արդէն պատրաստ և կամ շինուելու վրայ եղող մի գիծ: Կը նշանակէ, երեսուն տարուայ մէջ ստացել են քառորդից աւելին այն արդիւնքի, որ Ֆրանսայում մեր մեծ ընկերութիւնների ամբողջութիւնն է ձեռք բերել: Արդէի դրութիւնը որոշելու համար ես միայն երկու թիւ

*) Տե՛ս «Մուրճ» № 6.

կաւելացնեմ վերևում ասածներինս. 1900-ին կայսրութեան մէջ եղած բոլոր երկաթուղիներն արել էին քառասուններեք միլիոն քրլովներ ի համող տարածութեամբ երթեակ, և հարիւր երկու միլիոն ճամբորդից աւելի էին տեղափոխել: Այդտեղից հետևելի է, որ փոխադրութեան այս նոր ձևը շատ են գործածում: Իրօք, եթէ նրանց զնացքները մերիններին չափ արագընթաց չին, դրա փոխարէն՝ աւելի հաճելի են և մանաւանդ աժան:

Ես բաց եմ թողնում հանրակառքերը, որոնք նոյնպէս շատ բարգաւաճ վիճակ ունին, ինչպէս ցոյց կը տայ հէնց նաև միայն հետևեալը, թէ՛ Տոկիօյի հանրակառքերի ընկերութիւնը տարեկան երեսուն տոկոս է շահում:

Հասնում ենք հիմա ծովագնացութեան, այսինքն՝ արտաքին հաղորդակցութեան: Ինչպէս որ ճապոնցիք դեսպակից յանկարծ ցատկեցին ճեպընթաց զնացքները, այնպէս էլ նրանք իրանց հին ջոնկաներից անմիջապէս թևակոխեցին մեր ամենանոր նաւերը:—Անտարակոյս, հին ճապոնը չէր քաշում ծովային ձեռնարկութիւններից, այսպէս՝ 1585-ին ճապոնական մի դեսպանութիւն զնաց, այցելեց պապին ու Լրոպական զանազան արքունիքներ: Աւելի ուշ մի այլ ճապոնցի Մագիլլանից յետոյ առաջին անգամ Պաղատական Ովկէանոսը ճեղքեց, անցաւ: Բայց 1636-ին երբ փոխուեցաւ ճապոնը, շոգունական կառավարութիւնն արգելեց, որ ազատ ծովում նաւելու կարող մեծութիւն ունեցող ջոնկաներ այլ ևս չի շինուին: Մի այդպիսի հրովարտակի դէմ երկու դար տրանջում էր ծովային այս ժողովուրդը. և հասկանալի է, որ այն ժամանակից սկսած ինչ ուժգին եռանդով ձգտեցին նրանք միջազգային յարաբերութեան վերսկսումին: Ես այստեղ կրկին բաց եմ թողնում վաճառականական նաւարկութեան պատմութիւնն սկսած այն օրերից, երբ ջոնկաները փոխարինուեցան շոգենաւերով, մինչև ճապոնի արդի նաւաշինարանների աւարտումը, ուր նրանք այժմ անձամբ շինում են իրանց մեծ նաւերը: Կը բաւակաշանանալ յիշատակելով ամենանոր շրջանը, որ սկսուեց 1896-ին՝ նաւագնացութիւնը քաջալերող զանազան օրէնքներով: Այդ ժամանակ ճապոնական մեծ շոգենաւերը պարունակում էին մօտ երկուհարիւր վաթսուներ վեց հազար տակառաչափ. 1902-ին (վերջերս ճապոնում հրատարակուած մի հաշուեցուցակի հիման վրայ) վերոյիշեալ թիւը հասաւ չորս հարիւր եօթանասուն հազար տակառաչափի. ուրեմն ութսուն տոկոս աւելացել է վեց տարում: Եթէ այս թուին աւելացնենք փոքր ծաւալ ունեցող նաւերն էլ, ապա կըստանանք հինգ հարիւր հազար տա-

Վառաչափ ունեցող մի գումար. և Ճապոնի վաճառականական նաւարկութիւնը, որ այնչափ մատաղահաս է դեռ, բռնում է Յրանսային անմիջապէս յաջորդող դիրքը:

Դրա հետեանքը.—1896-ին ճապոնական նաւերը միջին հաշուով (ոկ տասը տոկոս էին տեղափոխում, լինի իբր արտահանութիւն, լինի իբր ներմուծում. իսկ անգլիական, գերմանական, ֆրանսական և այլ նաւերին մնում էր իննըսուն տոկոսը: Սակայն 1902-ին երբ ճապոնական նաւերը յառաջագիմեցին, վերոյիշեալ թիւը հասաւ քառասուն տոկոսի, մինչդեռ օտար նաւերի գործունէութիւնն իջաւ վաթսուն տոկոսի: Հեշտ է ուրեմն գուշակել, որ կարճ միջոցում Ճապոնի նաւային ընկերութիւնները տէր կը դառնան ամբողջ արտաքին վաճառականութեան, չնայած որ նրանցից ամենալաւ օփտուածը դրամական շատ աւելի պակաս նպաստ է ստանում, քան Փերանսական Messageries Maritimes-ը: Առ այժմ նրանց մարդատար մեծ նաւերը, աշխարհի ամեն կէտերում, մրցում են մերիններին հետ, և ծառայութիւնը կանոնաւորապէս ապահովում են ոչ միայն ասիական հանգրուաններում, այլ նաև ամերիկական, աւստրալիական և նոյնիսկ եւրոպական նաւահանգիստներում, ուր նրանք ամեն տասն և հինգ օրը մի անգամ հասնում են մինչև Անվերս:

Վերջապէս մի քանի խօսք էլ ասենք փոստերի մասին, հեռագրերի և հեռախօսների մասին: 1900-ին փոստերում մօտ մէկ ու կէս միլիարդ փակ ու բաց նամակներ են շրջաբերուած, այսինքն՝ երկու անգամ աւելի քիչ, կան Յրանսայում, բայց շատ աւելի, քան Ռուսիայում: Պէտք է աւելացնել նաև, թէ Ճապոնում նամակների ճանապարհածախսը խիստ աժան է, փակ նամակն ամբողջ կայսրութեան մէջ շրջաբերելու համար երկուսուկէս կոպէկ կը պահանջէ, իսկ բաց նամակը կը գնայ մէկ ու մի քառորդ կոպէկով: Միևնոյն յաջադիմութիւնը նկատուած է հեռագրերի մէջ. 1900-ին երկրի մէջ տրուած է մօտ տասնըհինգ միլիոն հեռագիր, իսկ չորս հարիւր հազարից էլ աւելի փոխանակուած է արտասահմանի հետ: Ինչ վերաբերում է հեռախօսներին, Գրահամ Բելլն ինքը մի օր Տոկիոյում ինձ պատմում էր, որ անգլիերէնից յետոյ ճապոներէնն առաջին լեզուն է, որ խօսուել է իր գործիքի մէջ, քանի որ ճապոնցի ուսանողների ներկայութեամբ էր որ հնարեց նա այդ գործիքը: Դա մի բարեբաղդ գուշակութիւն էր. այսօր հեռախօս ամենաշատ գործածող ազգերից են ճապոնցիք, և այն աստիճան, որ տոկիօցի մի դոշաղ մարդ կարծում էր, թէ հեռախօսը ճապոնական գիւտ է, ուստի մի օր հարցնում էր մի ֆրան-

սացու, թէ արդեօք սրա հայրենիքումն էլ մտցնած է արդէն այս ճարտար գործիքը:

Ուրեմն հաղորդակցութեան ամեն կարգի միջոցներու ձապոնը մեզ հետեւեց ամբողջ հոգով ու լիապէս յաջողութիւն գտաւ:

Վերջապէս հասնում եմ արդի կազմափոխութեան մէկ այլ տարրին, որը նոյնպէս վերաբերում է մարդուս էական կարիքների շարքին. խօսքս ապահովութեան մասին է: Արդի ձապոնը շատ բան արեց ժողովրդի և ընչական ապահովութեան համար: Երկրաշարժների, այսինքն այդ երկիրն յաւիտենապէս ճնշող այդ սոսկալի պատուհասի դէմ գիտական մի ամբողջ կազմակերպութիւն ստեղծեց: Սրա հետեւանքն այն եղաւ, որ եթէ ամենալաւ կերպով չի նախազգուշացնում վտանգից, առնուադն մեղմացնում է դրա ազդեցութիւնը: Փոթորիկների և տիֆոնների դէմ հնարեց օգերևոյթական հրաշալի մի ցանց, կեդրոնական դիտանոցով, որ ամեն ժամ հաղորդակցութեան մէջ է հեռագրաթիւերի միջոցով՝ անթիւ կայարանների հետ, որով մեծ ծառայութիւններ է մատուցանում նաւորդներին: Հրդեհներից ևս պաշտպանուելու նոր միջոցներ ձեռք առաւ, լայնացնելով փողոցները, գործածելով հրդեհաշէջ, շոգեշարժ ջրհաններ և այլն: Ընդհանրապէս, բոլոր պատուհանների դէմ հասարակաց օգնութեան և նախազգուշութեան համար միջոցներ ստեղծուեցան: Վերջապէս չարագործների դէմ կազմակերպուեցաւ մի հրաշալի ոստիկանութիւն, որը՝ շատ հաւանականաբար՝ աշխարհի ամենալաւն է, մանաւանդ Տոկիօյինը. այս մայրաքաղաքի ոստիկանութիւնը, չնայած որ մէկ ու կէս միլիոնից աւելի մարդիկ են շրջում Պարիզից երեք անգամ աւելի ընդարձակ տարածութիւն ունեցող այդ քաղաքում, բայց մարդ այնտեղ նոյնչափ ապահով է, որչափ մեր գաւառական փոքրիկ քաղաքներում: Սակայն ինչ որ ճապոնական կառավարութիւնը պէտք է ամենից աւելի ուշադրութեան առնէր, դա հէնց երկրի ապահովութեան գործն էր, այն է՝ ազգային ապահովութեան խնդիրը:

Ամեն մարդ գիտէ, որ այս ժողովուրդը ռազմասէր է. ամբողջ չորս հարիւր տարի, 1200 թուից մօտ մինչև 1600-ը, քաղաքական պատերազմն էր այդ երկրի սովորական վիճակը և նոյնիսկ յաջորդող երկարատև խաղաղութեան ընթացքում նրանք պահպանեցին զինուորական կարգերը. բայց կորցրել էին իրանց վարժութիւնները, նրանց սրբերը ժանդտել էին, նրանց ոգիները մեղկացել:

Արդ, երբ սրանից յիսուն տարի առաջ Արևմուտքը յան-

Կարծ գալիս է կռիւ փնտռելու ռազմական գերազանց միջոցներով, ճապոնցիք տեսնուած են, որ անկարող են իրանց նախկին միջոցներով գլուխ պահել: Ուստի նրանք ճակատագրապէս ընդունեցին այն դաշնիքները, որ նրանց առաջարկուած էին: Բայց իսկոյն գործի ձեռք զարկին, որպէսզի թէ դիմադրել կարողանան նոր նախայարձակումներէ, և թէ աւելի ուշ կարենան պահանջել, որ իրանց անկախութիւնը սահմանափակող այս դաշնիքները վերաքննուեն: Այստեղից յառաջ է գալիս նրանց բանակի և նաւատորմի կատարեալ վերակազմութիւնը եւրոպական ձևով:

Բանակի համար նախ եղաւ արևմտեան կարգ ու կանոնի ներմուծումը, զինուորագրութեան հաստատումը. իսկ նոր ծրագրով վերակազմեցին ամեն ինչ, որ կը վերաբերէր անձնական ընչակիան և աշխատանքի ապահովութեան: Յետոյ, չինական պատերազմից ու Եւրոպայի երեք զորութիւններէ սպառնական միջամտութիւնից յետոյ, հանդէս եկաւ զօրաբանակի անհպելի անկողմը, որ տասը տարուայ մէջ կրկնապատիկն անցաւ. այնպէս որ այսօր ճապոնական բանակը պարունակում է միջին թուով հարիւր յիսուէն հազար միշտ պատրաստի, երկու հարիւր հազար պահեստի, և երկու հարիւր յիսուէն հազար տեղապահ զինուոր, ընդամենը՝ մօտ վեց հարիւր հազար ¹⁾:

Միևնոյն ապշեցուցիչ ծաւալումը կը տեսնենք նաև նաւատորմի չինական նաւերու ճանապարհորդութեան վերջին շրջանում՝ լոկ մի հատ մեծ նաւ ունէին, որովհետև տէրութիւնը ոչնչացրել էր բոլորը, որպէսզի աւելի լաւ ապահովէր իր կղզիացման քաղաքականութիւնը: Բայց 1850-ից նըրանք փորձեցին արդէն պատրաստել մեր պատերազմական նաւերի նմաններ, և 1856-ին, երբ ռուսական մի ֆրեգատ մուրրուելով ընկել էր ճապոնական ափերը, նրանք ռուսներին օգնեցին վերանորոգելու այդ վնասուած ֆրեգատը, և անա հէնց այդ առթիւ կարողացան օգտուել այդ գործնական դասից. այնպէս որ իսկապէս ռուսներն են եղած ճապոնցոց նաւային առաջին վարպետները: Այնուհետև, նաւային վերակազմութեան գործն անընդհատ շարունակեցին մինչև չինաց դէմ մղուած պատերազմը. իսկ այդ կէտից սկսած կրկնապատիկ եռանդով յառաջ տարան, քանի որ գիտենք, թէ

1) Աւելորդ չլինի նկատել նաև, որ ամենավերջին և հաւաստի աղբիւրներէ հիման վրայ, նրանք այսօր ռազմի դաշտում միայն արդէն ունենին վեց հարիւր հազար մարդ, զեռ թողնենք երկրում մնացած զինուորներին: Մ. Ք.

այսուհետև ճապոնը կարող է կռիւ մղել եւրոպական նաւատորմի զիններից շատ շատերի դէմ: Ուրեմն կառավարութիւնն առանց դանդաղելու գործադրեց նաւային ծաւալման մէկ ընդարձակ ծրագիր, որին հէնց սկզբից նուիրեց կէս միլիարդից աւելի, և որի արգասիքներն այսօր հետևեալներն են—հարիւր. ռազմանաւ, որոնցից վեցը վիթխարի զրահաւորներ են. վերջիններն շարքումն է գտնուում աշխարհիս ամենամեծ մարտանաւը կարճ խօսքով՝ նրանք այսօր ունին մի նաւատորմիդ, որի ծաւալն է մօտ երեք հարիւր հազար տակառաչափ և որի սպառազինումն ամենաընտիր տեսակից է: Կը նշանակէ ճապոնն ուժգին զինուած է ինչպէս ցամաքի, այնպէս և ծովի վրայ: Պատերազմական պահետան առաջնակարգ յատկութիւն ունի իր զինուորական անձնաւորութիւնը որչափ մարզուած, այնչափ և անձնուէր է. կազմակերպական ոգին չին-ճապոնական պատերազմի ժամանակ արդէն գերազանց ճանաչուեց արդի արշաւանքներում հանդէս եկած եւրոպական ըլոր վարչութեանց ոգուց: Իսկ ինչ վերաբերում է իր ռազմական եռանդին, բաւ է յիշել միայն, որ չինական վերջին դէպքերի ժամանակ ճապոնցիներն էին դաշնակից պետութիւնների պարագլուխները: Արդ, ամենաշատը յիսուծն տարի է, որ ճապոնը վերանորոգուած է այսպէս, և միայն տասը տարի է, որ նա բարձրացած է, մի գերագոյն ջանքով, զինուորական մեծ ուժերի աստիճանը:

Անշուշտ կարելի է ցաւիլ, որ այդչափ խելք և եռանդ գործածուած է մի այդպիսի նպատակի համար. բայց ինչ որ մեզ մնում է յիշատակելու այս առթիւ, առ այժմ այն է, թէ յիշեալ խնդիրը ևս մի նոր փաստով ապացուցանում է նրա ունեցած իւրացման հրաշալի ոգին, որ ամեն կարգի բաներում, վատերի մէջ, ինչպէս և լաւերի, նոր ճապոնի յառաջադիմութիւնն է կազմում:

Դժբաղդաբար հսկայական կազմափոխութեանց համար մեծ դրամ է պէտք, և թէ խաղաղական ծախսերի համար մեծ գումար է հարկաւոր, զինուորական ծախսերի համար դեռ շատ աւելի է պէտք, և անդադար կրկնուելով երեքը չեն փոխարինում ան, ինչ արժէքի որ նստել են: Արդ ճապոնը բաւական աղքատ մի երկիր է. ազգային հարստութիւնը երեսուս միլիարդից աւելի չէ, մի գումար, որ ֆրանսական հարստութեան լոկ մի եօթերորդ մասն է կազմում: Ուրեմն ընդհանրութեան բարօրութիւնը պահպանելու համար, այսինքն՝ միաժամանակ կողմնակի անհատների և տէրութեան բարօրութիւնը պահպանելու համար, տէրութեան, որի բարեկեցութիւնը կախուած է,

հասարակական բարօրութիւնից, կարիք կար արտադրութեանց նոր աղբիւրներ որոնելու. և ինչպէս որ վաղուց արդէն ծաղկած երկրագործութիւնը չէր կարող աւելի յառաջադիմել, մնում էր զարգացնել ճարտարարուեստները (industrie) և արտաքին վաճառականութիւնը: Այս վերջինի տեսակէտից հին ճապոնցիք շատ աննպաստ պայմաններում էին գտնուում, որովհետեւ երկրի ներսում արհամարանքով էին նկատում այն ամենը, որ վերաբերում էր փողի, ուստի և առևտրականներին դատում էին ամենայնպէս աստիճանը ընկերական կազմում: Իսկ երկրից դուրս նրանք ոչինչ անել չէին կարող, քանի որ տէրութիւնն այդ արդիւլած էր: Բայց և այնպէս ճապոնցիք մեզինքն էլ առաջ սկսել էին գործածել փոխանակազրեր, հատուցազրեր, բեռնագրեր, և մեր վաճառանակական բոլոր կարգերը: Նրանք ունէին կանոնաւոր կազմակերպուած դրամատներ, ունէին մերիններին պէս բանուկ արժէքատներ (bourses): Վերջապէս որոշ ձեռնարկութիւններ նոյնիսկ հասարակութեան յարգանքն էին վախելում, ինչպէս օրինակ՝ Միցույ առևտրական տունը, որը՝ ամբողջ երեք դարից ի վեր՝ բարգաւաճ վիճակ ունի, որը միշտ նահապետական միլնոյն ընտանիքի ձեռքում է և որը աշխարհի վաճառականական տներից ամենահինն է անկասկած: Հին ճապոնն ուրեմն ըստ ամենայնի պատրաստ մի սիստեմ ունէր վաճառանութեան համար. նրան պակասում էր առևտրական ուժգին կեանք, և այդ ծնեցնելու համար պէտք էր մի կողմից վերացնել հին նախապաշարմունքները, իսկ միւս կողմից՝ բանալ երկիրը փոխանակութեան մեծ շարժման առջև: Ահա թէ եռանդուն կառավարութեան աջակցութեամբ ինչ բանի աշխատեցին վերածնուած ճապոնի վաճառականները. և քառորդ դարի մէջ ստացուած արդասիրքներն են հետեւեալները.— 1875-ին թէ արտահանուած և թէ ներմուծուած արտաքին վաճառականութեան ընդհանուր գումարն էր հազիւ հարիւր քսան միլիոն. 1900-ին այդ թիւն արդէն հասել էր մէկ միլիարդ հարիւր քսան միլիոն ֆրանկի. ուրեմն քսանը հինգ տարում տասնապատկից աւելի շատացել էր: Այժմ այդ մղումը շարունակուում է, որովհետեւ մի շատ նոր հաշուեցուցակի հիման վրայ, վաճառականութեան այս շարժումը 1902-ին տուել է մէկ միլիարդ երեք հարիւր քսանը հինգ միլիոն ֆրանկ ¹⁾:

1) Չեմ կարող չլիշեցնել ընթերցողին, որ սրանից մի քանի օր առաջ ճապոնական երեկելի մի քաղաքագէտի հաւաստի ստորագրութեամբ պուլեցու Սւրուպայում, թէ նոյնիսկ արդի աղէտալի պատերազմի ընթացքում նրանց առևտուրը աճում է, մի բան, որ շատ սովորական երևոյթ չէ անտեսագիտական պատմութեան էջերում: Մ. Թ.

Սակայն, գործարանական կեանքում, ընդհակառակը, ճապոնացոց անելիքն աւելի դժուարին էր, որովհետեւ այս ասպարիզում նրանք զրեթէ ամեն ինչ մեզնից էին վերցնելու. ճապոնացիք պէտք է անցնէին ընտանեկան և խմբական աշխատանքներէ եղանակից մինչև աշխատանոցներն ու գործարանները, որոնց մէջ դարձնելու էին ամենանոր տեսակի մեքենաներ և որոնց մէջ գործելու էին հսկայական դրամագլուխներով ընկերութիւններ, ինչպէս որ այդ շարքի հիմնարկութիւնները կը պահանջնէ: Նրանք պէտք է կուռէին միաժամանակ կողմնակի անձանց յարուցած դժուարութեանց դէմ, քանի որ, եթէ այդ երկրի գործաւորը բաւականանում է քառասուն կողակ վաստակով, դրա փոխարէն՝ նա երբէք չի համաձայնի բանել սուղըկի նման, այլ արտիստի ձևով ու որոշ ժամերում: Նա որոշ ժամեր է յատկացնում իր սիրած զբաղմունքներին, որոնցից ամենագլխաւորն է ընթերցանութիւնը, ապա՝ բախտախաղերը և ծաղիկներ ու ընդհանրապէս բնութիւնն զմայլանքով դիտելը, այնպէս որ ճապոնական ձեռագործները, ի վերջոյ, կարծուածից շատ աւելի թանգ են նստում: Սակայն այստեղ ևս յառաջադիմութիւնն աչքի զարնող է. 1894-ին չին-ճապոնական պատերազմի ժամանակ եօթ հարիւր ութսուն գործարանական ընկերութիւններ կային՝ հարիւր տասը միլիոն դրամագլխով. 1900-ին երկու հազար երկու հարիւր յիսունի հասաւ այդ ընկերութեանց թիւը, դրամագլուխն էր երեք հարիւր եօթանասուն միլիոն. ուրեմն վեց տարում ընկերութիւններն ու դրամագլուխը եռապատկուել են: Եթէ ցանկալի է այս նոր կազմակերպութեամբ ստացուած արտադրութեանց մասին գաղափար կազմել, բաւ է յիշել, գործուած մետաքսի արտահանութեան գումարը. 1900-ին, երեսուն միլիոն Ֆրանկի էր հասած. այդ թիւն հարիւր անգամ աւելի էր այն գումարից, որ ստացւում էր հինգ-տասը տարի առաջ: Դա մի այնպիսի շուտափոյթ յառաջադիմութիւն է, որով ճապոնական ճարտարարուեստը կարող է իրօք պարծենալ: Այսչափն արդէն բաւական է ըմբռնել տալու համար նրանց վաճառականական և գործարանական յառաջադիմութեան մեծութիւնը, որն ազգային հարստութիւնը վերանորոգեց և որը ձգտում է Մայրազոյն Արևելքի Անգլիան դարձնել ճապոնը, ինչպէս որ սրա երազանքն էր այդ:

Այսպիսով, ինչ պատկանում է նիւթական կեանքին, ճապոնիան մեր օրինակով կազմափոխուեցաւ, և այս կազմափոխութիւնը հետզհետէ խորանում է, քանի հեռանում է անհատական կարիքներից (սնունդը, բնակարանը, հագուստեղէնը).

ճապոնական նախկին քաղաքակրթութիւնն արդէն շատ լաւ համապատասխանում էր այս վերջին պէտքերին, և ընդհակառակը մօտենում է հաւաքական մեծ կարիքներին խմբին, օրինակ՝ սպառազինումը և կամ ազգային հարստութիւնը: Եթէ հին ճապոնն անհատների երջանկութեան համար անօգուտ կամ հէնց նաև ֆրասակար էր համարում այս յառաջադիմութեանց մեծ մասը, դրա փոխարէն նոր ճապոնն, ընդհակառակը, մեծ ազգերի հետ շփուելով չի կարող ինքնիրան պաշտպանել այլապէս, եթէ ոչ նրանց նման կազմակերպուելով և նրանց սեփական միջոցներով նրանց դէմ կռուելով: Այն ինչ, թէ ընկերական և թէ բարոյական կեանքում ոչ մի նմանօրինակ կարիք չկար, այս պատճառով էլ վերջին երկու կէտերում ճապոնը, մեզնից դուրս թէ ոչինչ փոխ չառաւ:

Իրօք, ընկերական կեանքում նախ տեսնենք ինչ է վերցրած մեզանից. իր կառավարութիւնը. ո՞չ, քանի որ ֆէօդալականութեան ջնջումը մի նոր կենտրոնացման առաջ՝ զուտ ազգային երևոյթ էր, և մինչդեռ նախկին մեծամեծները հէնց մի անգամից թողին իրանց հողերն ու առանձնաշնորհումները, նրանք, հաստատ կարելի է ասել, որ չգիտէին, թէ Ֆրանսիան ունեցել էր իր օգոստոս 4-ի գիշերը *): Եւ մինչդեռ շոգունը յանձնեց իր իշխանութիւնը կայսրին, նա դրանով այն արեց, որ իր կարողութիւնը վերադարձրեց աշխարհի ամենահին իշխանական տան գլխաւորին:

Իր վարչութիւնն է արդեօք, որ մեզանից փոխ է առել. ո՞չ, քանի որ հազար տարուց աւելի է որ ճապոնցիք՝ հետեւելով չինացիներին՝ բիւրոկրատիկ ժողովուրդ են. իրօք այս կէտում շատ քիչ բան ունէինք նրանց սովորեցնելու:

Պարլամենտն էր արդեօք, որ տուինք նրանց. արտաբուստ՝ այո՛, բայց, էապէս, ճապոնական պարլամենտը ոչ այլ ինչ է, բայց եթէ մարկիզ Իտօյի հիմնած փորձառութեան մի դպրոցը՝ ժողովրդի քաղաքական դաստիարակութեան համար: Սահմանադրութիւնը մեծ խոհեմութեամբ է, որ թոյլ չէ տուել նախաբարական պատասխանատուութեան սկզբունքը, ուստի երբ խորհրդարանները (les Chambres) խելացի չեն,

1) Ընթերցողն արդէն գիտէ Ֆրանսական պատմութեան այն վեճ էջը, որ 1799-ի օգոստոս 4-ի գիշերը փորագրուեցաւ. այդ օրուայ երեկոյեան ժամի վեցից մինչև առաւօտեան երկուսը տեղի Սահմանադրական Ասեմբլեան մեծ ոգևորութեամբ պաշտպանեց ժողովրդական իրաւունքները և վճռեց, որ ազնուականներն ու պալատականներն այլևս ոչ մի առանձնաշնորհում չեն ունենայ թէ քաղաքական և թէ ընկերական բոլոր ասպարէզներում, ինչպէս և կը վերանայ ճորտութիւնը:

արձակուժեւ են. հետեւաբար այս հաստատութիւնն ակնկալութեան մի քար է ապագայ դեմոկրատ հիմնարկութեան համար:

Արդեօք օրինագրքերն են, որ եւրոպական ազդեցութիւնն են կրում. արտաքուստ՝ այն, կրկին. բայց, իրօք, դուրս են ձգուած բոլոր այն օրինագծերը, որ տեղական սովորութեանց չեն համապատասխանում: Իսկ ինչ վերաբերում է վերջներս ընդունուած ընագրերին, ոչ ոք չի կարող ասել, թէ ի՞նչ կը լինին դրանց դրական արդասիքները: «Կառավարութեան հաստատած օրէնքները, ասում է տեղական հին սուածը, լոկ երեք օր ապրող օրէնքներ են». և արդէն հին ճապոնը որևէ սովորութեան հեղինակութիւն չէր շնորհում, եթէ դա գոնէ յիսուն տարի տեւած չէր լինում:

Վերցնենք այժմ, ընդհակառակն, իրերի մէկ այլ շարք, ուր օտար ազդեցութիւնները սովորաբար շատ շուտ են նկատուում. խօսքս խաղերի մասին է. սրանք ևս էական տեղ են բռնում մարդկային կեանքում, քանի որ մեր անհրաժեշտ կարիքներից մէկին են համապատասխանում, և մենք չաշխատած ու չի ննջած ժամերս խաղով ենք անցնում: Արդ, քսան տարի առաջ ճապոնացոց խելքին փչեց մի բոպէ՝ արեւմտեան մեր գրօսանքներն իւրացնել. կանայք պարում էին, տղամարդիկ թուղթ էին խաղում, մանուկներն աճառէ պղպշակներ էին փչում. սակայն այս ոգևորութիւնն էլ մարեցաւ քիչ տարիներ անցնելուց յետոյ. այսօր կանայք ապրում են իրանց յարկի տակ, մարդիկ ևս շատ խելօքութեամբ վերադարձան իրանց վաղեմի «70» ասուած խաղին, որը մեր ճատրակից աւելի բարդ է. իսկ երախաները վերսկսեցին թուղթիկը: Եւրոպական շփման էապէս լուրջ ու միակ հետեանքը, ընկերական կազմում, եղաւ այն, որ հին ճապոնի դարդը կազմող դործնական փոխադարձականութեան (mutualisme) տեղ ընդունեցին անհատապաշտութիւն (individualisme), որն արդի ճապոնի դժբաղդութիւնն է կազմում. այս արդիւնքն իսկ տեղային նիւթական կեանքում յառաջացած փոփոխութեանց արգասիքն է:

Մնում է ուրեմն լոկ բարոյական կեանքը. նրանք արդեօք իւրացնելու էին մեր բարոյականութիւնն իսկական իմաստով, մեր կենցաղական եղանակը: Հաստատ կարելի է ասել, որ ոչ. նրանց ունեցածը կարժէր մերիններից ամենաընտիրը: Հին ճապոնացոց համար, բարոյական մարդն այն իմաստունն էր, որ իր սրտի ինքնածին ընազդներին հետեւելով, այն է՝ խղճի ձայնին, կամաւոր հնազանդուում էր բանականութեան օրէնքներին. իսկ անբարոյականն, ընդհակառակը, մի յիմար էր, որն անկարող էր ինքն իրան ղեկավարել. հետեւաբար բարոյակա-

նութիւնը կայանում էր պարտականութեան կատարման մէջ, ինչպէս որ լուսաւորուած միտքն ըմբռնում է այդ: Ինչպէս ասում էր Մուրօ Կիռուսոն՝ հին ճապոնի այս Սոկրատը. «փիլիսոփան ակելի լաւ է որոշում բանականութիւնը, քան թէ կոնծարանը գինու համը». և այս պայծառատես բարոյականութիւնը միայն մի քանի բացառիկ խելացիների կարծիքը չէր, այլ այդպէս էին սովորեցնում տարրական դպրոցներում մանուկներին իսկ, և հրաշալի ձեռնարկներով, որոնք հազար տարուց ակելի է որ կազմուած են: Ուրեմն անկախ բարոյականութեան տեսակէտով՝ ճապոնցիք ակելի դարգացած էին, քան մենք. և իսկապէս Նւրոպան չէր, որ այս էջում նրան դաս տալ կարողանար:

Մեզանից կրճնն էին փոխ առնելու. դեռ ակելի ևս ոչ: Անկասկած, նրանք վախենալու բան չունէին, ինչպէս երբեմն էր այդ, հւրոպական այս քաղաքականութիւնից, որ ճապոնցի մի գրագէտ հետեւալ դարձուածքին էր վերածել. «Տնւր ինձ քո երկիրը ես քեզ կը տամ իմ Աւետարանը»: Այժմ ճապոնցիք բաւականանում են ժպտալով այս հեռաւոր վտանգի վրայ, որից նրանք կարողացել էին խուսափել: Բայց դրա փոխարէն քրիստոնէութիւնը նրանց հետզհետէ թլում էր ուղմիկ նախապաշարունակների մի կոյտ, և զարմանում էին, որ գիտնական Արեւմուտքը դեռ կարողանում է կապուած մնալ այդ հնացած դաւանանքներին: Արդէն երկու հարիւր տարի առաջ Արայ Հակուսեկի փիլիսոփան, որին յանձնարարել էին հարցաքննել ճապոնը կրօնափոխելու եկած մի ճիզուխտ քարոզչի, հետեւալ պարզ գաղափարին է վերածել իր տպաւորութիւնները: «Այս օտարականի մէջ երկու մարդ կայ, երբ նա խօսում է իր երկրի գիտութեանց մասին՝ նա հրաշալի է, բայց հէնց որ համնում է կրօնին, նա սկսում է ցնդաբանել, և խօսակցութիւնը դառնում է երախայական. կարծես թէ մարդ լսելիս լինէր նախ մի իմաստունի խօսիլը, ապա, յանկարծ մի յիմարի»: Մեր օրերում հասկացողութեան այս ձևը բոլորովին ընդհանրացած է. միայն հետեւալ եղելութեամբ բաւականանամ.— ճապոնում ծնուած մէկ հւրոպացի Արեւմուտք գալով իր ճապոնացի ծառաներին հետ, նրանց անմիջապէս հարցրել է, թէ ի՞նչն է ամենից ակելի նրանց աչքին զարնող բանը Նւրոպայում. լսեց, որ՝ նրանց խոնարհ կարծիքով՝ մեր բնաւորութեան երեք գլխաւոր գծերն էին— կեղտոտութիւն, պճնասիրութիւն և սնապաշտութիւն: Այս պայմաններում հասկանալի է արդէն, որ մեր քարոզիչների գործադրած բոլոր ջանքերն ունայն են: Բացի այս, ճապոնն

ունէր իր պաշտօնական եկեղեցին—բուզդայականութիւնը, որը տէրութեան մէջ նոյն դիրքն ունէր, ինչոր կաթողիկոսութիւնը Փրանսիայում. սակայն նոր տարեթուի հէնց սկզբից երեք տարուայ մէջ (1871—1874) Ճապոնը կատարելապէս անջատեց տէրութիւնն այդ իր եկեղեցուց. ճիշտ է, որ մի նոր, օտար կրօնով փոխարինելու համար չէր որ այդ արեց: Իրօք, քաղաքական մի քանի անձեր առաջարկեցին ութսունական թուականներին՝ պաշտօնապէս ընդունել քրիստոնէութիւնը, ինչպէս որ այդ ժամանակ երոպական զգեստ գործածելը թոյլատրելի էր, որպէսզի դիրքանար վաճառականութիւնն ուժեղ Արևմուտքի հետ. բայց այդ կարծիքը լուրջ բանի տեղ չանցաւ: Ուրեմն կրօնի կողմից էլ, ինչպէս նաև բարոյականութեան, արևմտեան ոչ մի զգալի ազդեցութիւն չի կրեցին:

Ես զանց եմ առնում արուեստի հարցը. որովհետև այս կէտում շատ ճիշտ է, որ նրանք անասհման կերպով աւելի են տուել մեզ, քան թէ վերցրել մեզանից: Արևմտեան ազդեցութիւնը Ճապոնում իւզաներկ պատկերների լոկ մի քանի փորձերում է երևում, այն էլ ընդհանրապէս բաւական անյաջող. մինչդեռ ճապոնական ազդեցութիւնը Եւրոպայում ընդհակառակը, մեր շատ վարպետների մէջ է երևում. նրանք սկիզբ դնել տուին մեր զարդանկարչական արուեստին ¹⁾:

Միայն գիտութեան ասպարէզն է, ուր նրանց վրայ ազդել ենք, որովհետև այդ կէտումն է, որ փայլում է մեր արդի քաղաքակրթութեան հրաշագործ բնաւորութիւնը, և ճապոնցիք այդ կէտում չի սխալուեցան: Նախկին իշխանութեան օրով նրանք ռազմասէր ժողովուրդ էին անկասկած, բայց միևնոյն ժամանակ ուսեալ էին. ճապոնական հին քաղաքակրթութիւնը կարելի է մարմնացնել տեղացի այն ռազմիկի գծերով, որը կուռի գնում երգելով ու ծաղիկն էլ խրած կապարճին: Միջնադարի ամենամեծ աղմուկների միջոցին իսկ, դեռ այս ու այնտեղ կային խաղաղ անկիւններ, ուր գիտութեան ծարաւող անձինք ուսանում էին: Իններորդ դարի ուսումնական ձեռնարկները, որոնց մասին քիչ առաջ ակնարկեցի, արդէն պարունակում էին այսպիսի նշանաբաններ. «Պահարաններում ամ-

¹⁾ Ճապոնական նկարչութեան մասին ընդարձակ և լուրջ դադափար կազմել ցանկացողը կարող է կարգալ սոյն յարգելի ուսուցչապետի այն գեղեցիկ երկը, որ նա նուիրած է ճապոնցի հռչակաւոր գծագրիչ Հոկասյի գործունէութեանը. այդ գրքով էր, որ երիտասարդ ուսուցչապետն ստացաւ դոկտորութեան աստիճան: Կարդալու է ապա նաև «De arte florali apud Japonenses». իր մեծ շարադրութիւնը: Ծ. Թ.

բարուած հարստութիւնը ոչնչանում է, բայց մտքում հաւաքուած գանձերը մնում են ընդմիջտ.» կամ թէ նաև. «Բու կարող ես կուտակել հազարաւոր ոսկիներ, բայց ուսման մէկ օրուայ չափ իսկ թանկագին չին լինի»: Եւ իրօք, երբ տասնութիւրորդ դարում ճապոնացի մի խեղճ ուսանող մարդակազմական հոլլանդերէն գրքին առջև նստած, ինչպէս որ Շամպոլլիոնը հիւերոգլիֆների առջև, կարողացել է մի ամբողջ օրուայ երկար աշխատանքից յետոյ վերջապէս ըմբռնել մի որոշ բառի իմաստը, նա զդացել է, ասում է ինքը, «անբացատրելի ուրախութիւն. կարծես տիրած լինէի ամենաթանկ գոհարներով լի մէկ դղեակի.» կարելի էր արդէն գուշակել, թէ այդպիսի ուսանողներն ի՞նչ ոգևորութեամբ ձեռք զարնելու էին գործի, երբ լուսամիտ կառավարութիւնը՝ վերացնելով մեր գիտութիւններով զբաղուողներին մահ սպառնացող արգելքները, նոր կեանքի հիմքը դարձրեց, ընդհակառակը, հէնց եւրոպական ձևով կրթութիւն տարածելու: Այդ ժամանակ էր, որ ժողովրդական կրթութեան համար մի բոլորովին նոր սխտեմ տարածուեցաւ. և դրա հետևանքն է այսօր ամբողջ կայսրութեան մէջ եղած դարձումների առատութիւնը, սկսելով նախնական կրթութեան լայն ծրագրից՝ իննսուն հազար ուսուցիչներով, չորս ու կէս միլիոն աշակերտներով, մինչև Տոկիօյի համալսարանը, ուր երկու հարիւր քսանը հինգ ուսուցչապետներ կան, որոնցից շատերն արդէն թանկագին գիւտեր են արած, և ուր երեք հազար ուսանողներ կան, որոնք բոլորը զբիթէ մօլի աշխատասէրներ են, զինուած բազմաթիւ օտար լեզուներով ու հակուած Արևուտքի գրքերի վրայ, նման մեր Վերածնութեան մատենագէտներին՝ հնութեան ձեռագրերի վրայ ծոռած: Այդ ժամանակ էր, որ հանդէս եկաւ մտածողների մի ամբողջ խումբ, որ կրթութեան, գրքի, լրագրի միջոցներով ձեռք առաւ նոր ձապոնի մտաւոր առաջնորդութիւնը. գիտեցք, որ միևնոյն անձնաւորութիւններն են, որ միաժամանակ պահում են մեծ դպրոցները, թէ գրականութիւնը և թէ մամուլը և այս եռակի միջոցներով նրանք շարժում են տալիս իրանց երկրի զարգացման: Դրա հետևանքն այն է, որ ճապոնական գրականութիւնը մերինից աւելի լուրջ է, օրինակ՝ վերջին հաշուեցուցակից տեսնելով է, որ մի տարուայ մէջ լոյս տեսած քսան հազար հատորն անցնող գրքերից եթէ չորս հարիւր հատորը վէպեր էին, հինգ հազարն էլ այնպիսի գրքեր էին, որոնց նիւթը նուիրուած էր վարչական և իրաւական հարցերին: Եւ ես աւելացնում եմ, որ նոյնիսկ վէպը ներկայ ձապոնում շատ ծանրակշիռ կերպարանք ունի դիտմամբ. վերջերս ամենամեծ յաջո-

դուժիւն գտած վէպի հերոսն էր Եպամինոնտասը ¹⁾։

Համառօտենք ասածներս։ Նոր Ճապոնի հանդէս գալը հրաշագործ մի երևոյթ չէ, ինչպէս կրկնում են շատերը, և ոչ էլ իր պատմութեան ընթացքում բացառութիւն է, քանի որ արդի Ճապոնի սկիզբը դնող յեղափոխութիւնը պատրաստուած էր մէկ ու կէս դար տեւած սաստիկ կղզիացման միջոցաւ։ Իսկ արդի տարեթուի ամենանշանաւոր վերանորոգութիւնները, սկսած գիտական ու վաճառականական զարգացումներից, շատ աւելի շուտ էին յայտարարուած, քան մեր հասնելը այդ արշիպելագոսը։ Բացի այս, նոր Ճապոնը չէ ներկայացնում շտապ ու բեկուն նմանողութիւն մեր ամբողջ քաղաքակրթութեանը՝ առանց ընտրողութեան, ինչպէս ուրիշներն են ենթադրում. այլ նրանք իւրացրել են որոշ բաներ, խոհեմ ու հաստատ կերպով, քանի որ այդ ինդիերը ղեկավարուել է քաղաքական հազուագիւտ մտքերով տոգորուած մարդկանցից, և զննուել մի այնպիսի ժողովրդից որը շատ աւելի կշռադատող է, քան ընդհանրապէս կարծում են ուրիշները։ Երբ մեր քաղաքակրթութիւնը նրանց առջև բացուեցաւ, նրանք չի շլացան, որովհետեւ ինչ-ինչ կէտերում ճապոնցիք մեզինից իսկ շատ աւելի գտուած էին։ Մեր ոչ բարոյական և ոչ էլ ընկերական կեանքը նրանց չի մոլորեցրել. մեր միայն նիւթական կողմն էր, որ իր գիտական կատարելագործութիւններով կարող էր նրանց պատկառանք ազդել. ուրեմն նրանք նիւթական մեր այս կեանքը փոխ առան, միայն թէ չափաւոր կերպով. այնպէս որ նոր հմտութիւնները միանում են հսկայական առանց ջնջելու պատմական այնքան դարերի ընթացքում իւրացուած չինական վաղեմի հիմունքները, և ոչ էլ երկու հազար տարուց աւելի գոյութիւն ունեցող ճապոնական ցեղի սրտում դրուած նախնական խարխիւնները։ Մի երրորդ քաղաքակրթութիւն եղաւ եւրոպականը, որ ճոխացրեց նախորդ երկուսը։ Թէ իրօք ինչ էին այդ նոր հմտութիւնները, արդէն ցոյց տուի, և այն էլ ճիշտ իրերի մի ամբողջութեամբ, որ առիթ եմ ունեցել հէնց այդ

¹⁾ Եպամինոնտան այն հռչակաւոր յոյն զօրավարն էր, որ սպարտացիներին յաղթեց Լեօքորեսում և Մանդինէում (411—363 Քր. առ.). այս պատերազմներից վերջինում նա մահացու վէրք ստացաւ, բայց երբ լսեց թշնամու խորտակուած լինելը, բացազանչեց. «բաւ է որչափ ապրեցի, հերիք է, որ չեմ մեռնում յաղթուած.» իսկ երբ իմացաւ, թէ ցաւում են, որ ժառանգ չէ թողնում, նա ասաց. «ես թողնում եմ երկու անմահ աղջիկներ՝ Լեօքորեսն ու Մանդինէն...»։ Հասկանալի է, թէ այդչափ հեռաւոր դարերից քաղուած նիւթը որչափ լուրջ ուսումնասիրութիւն կը պահանջէ վեպասանից։

երկրումն իսկ դիտելու երկար տարիների ընթացքում և որոնք միջոց կը տան ընթերցողին որոշելու ճշգրտեամբ, թէ նոր Ճապոնն ինչ բանի մէջ հետեցեալ Արևմուտքին և ինչ բանի մէջ՝ ո՛չ: Վերջապէս մենք գտնուում ենք բառասունը հինգ միլիոն հոգուց բաղկացած մի ազգի դէմ, որը խելօքութեամբ գլուխ բերեց մի կազմակերպութիւն, որը միաժամանակ թէ անհրաժեշտ և թէ շահեկան է իր համար: Ճապոնցիք կատարեցին մի կարևոր կազմափոխութիւն, որը նրանց հայրենիքի համար մահու և կենաց ինդիք էր ¹⁾: Այդ կազմափոխութիւնը նրանց համար նաև օգտակար էր, քանի որ մեզ չէին հետևում կապկի պէս, թեթևօրէն, այլ փորձառութեամբ ընդունում էին ինչ որ մեր ամենաընտիրներից ունէինք նրանց նուիրելու. ահա թէ ինչ արին նրանք ուշադրութեան արժանի ընտրութեամբ, նախ՝ իւրացրին մեր նիւթական կեանքի բոլոր կատարելագործութիւնները և ամենից աւելի հէնց այն աղբիւրը, որից ըլխում են բոլոր այս յառաջադիմութիւնները, այսինքն՝ գիտութիւնը, որ Եւրոպայի ճշմարիտ փառքն է և մեծութեան միակ պատճառը:

Միշէլ Ռոլվոն

Ֆրանս. թարգմ.
Մ. Մատենիան
Պարիզ.

(Ուսուցչապետ Պարիզի Համալսարանում, Մայրագոյն Արևելքի Ազգաց քաղաքակրթութեանը նուիրուած բաժնում)

1) Այստեղ ստիպուեցինք մի երկու տող կը ճատել: